

Ծրագրի նախագծում և կառավարում

Անահիտ Գևորգյան

Ծրագրի նախագծում

1. Պրոբլեմային իրավիճակի նկարագրություն (անպայման փաստերով ու աղբյուրներին հղումով)
2. Պրոբլեմի ձևակերպում
3. Նպատակի սահմանում
4. Խնդիրների ձևակերպում (պրոբլեմի լուծման այն ուղիները, գործոնները, որոնք որոշիչ են համակարգի կատարելագործման հարցում)
5. Մեթոդի ընտրություն
6. Գործողությունների որոշում
7. Ակնկալվող արդյունք
8. Ներգործություն
9. Կայունություն

Պրոբլեմի ձևակրպման համար անհրաժեշտ է

ա. կատարել կարիքի ուսումնասիրություն

բ. բացահայտել առաջնահերթ կարիքը ըստ համայնքի
անդամների որոշմամբ/պրոբլեմի օրինակ/

Պրոբլեմը փաստի անհամապատասխանությունն է
ցանկալին, իդեալականին, ընդունված նորմին:
Համայնքային պրոբլեմը բացասական
ազդեցություն է ունենում մարդկանց և շրջապատի
վրա:

Սոցիալական պրոբլեմների դասակարգումը ստ

– Պրոբլեմի կրողի (սոցիալական խումբ, կառույցներ, սոցիալական ինստիտուտ՝ ընտանիք, դպրոց, կրոն)

Տարածվածության ծավալների (գլոբալ, համազգային, ռեգիոնալ, համայնքային, թաղային տարածում)

Հակասությունների գոյության ծամանակահատվածի (կարճատև միջին տևողության , երկարատև)

Խորության (մի երևույթի հետ կապված, մի քանի երևույթների, համակարգերի հետ կապված, գլոբալ բնույթ կրող)

Ձևակերպել պրոբլեմ, որի մեջ միաժամանակ կարտացոլվի

- պրոբլեմի կրող համայնքային
սոցիալական խումբը

- գոյության ժամանակահատվածը

- տարածվածության ծավալը/վերջին երեք ամսում
Ալավերդու շրջանի գյուղերում նկատվում է հղի կանանց
վիժումներ /

Նպատակը արդյունքների հասնելու ուղին է, որին

Նպատակը պետք է լինի

- կոնկրետ
- չափելի
- հասանելի
- իրատեսական

Համայնքի զարգացմանն ուղղված ծրագրի նպատակը պետք է առաջարկի լուծում ուղղված համայնքի անդամների իսկ կողմից, որպես առաջնային ընտրված պրոբլեմի համար:

Առաջարկվող լուծումը չպետք է հակասի երկրում
վարվող ընդհանուր քաղաքականությանը

Լուծումները կարող են ուղղված լինել

- ծառայությունների մատուցման կազմակերպմանը
կամ դրանցում փոփոխություններին
- իրավական դաշտի ատարելագործմանը,
վերահսկմանը
- տեղական հկ-ների, ՏԻՄ-երի հետ
համագործակցությանը....

Ձևակերպել համայնքային ծրագրի որևէ նպատակ և ցույց տալ դրա

- չափելիությունը
- իրատեսականությունը
- ուղղվածությունը

Խնդիր – ինչ անել

Մեթոդ – ինչպես անել

Գործողություններ – հերթական քայլեր

Արդյունք - ինչ ունենալ վերջում

Ներազդեցություն - ինչ ազդեցություն կունենա
պրոբլեմի հաղթահարման տեսակետից

Կայունություն - ինչպես կապահովի ծրագրի
շարունակականությունը

Ծրագրի կառավարումը իր մեջ ներառում է

- ներքին և արտաքին հարաբերությունների կառավարումը
- որակի և արդյունքի ծավալի համապատասխանության հսկումը
- մարդկանց և միջոցների կառավարումը
- պարտականությունների սահմանվածությունը և հսկումը
- որոշումների ժամանակին կայացումը
- աշխատակազմի համապատասխան անդամների ընդգրկումը որոշումների կայացմանը
- ողջ աշխատակազմի ժամանակի տեղեկացվածության ապահովումը